ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Արձանագրություն

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի Հանրապետության Կառավարության միջև 2006 թվականի նոյեմբերի 6-ի միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Հայսատանի Հանրապետության Կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ ‹‹Կողմեր››,

առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև 2006 թվականի նոյեմբերի 6 Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին համաձայնագրի (այսուհետ՝Համաձայնագիր) և միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ոլորտում Կողմերի միջև համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

2-րդ Հոդվածի ա) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

- ա) իրավասու մարմիններ.
- Հայկական Կողմից – Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն;

6-րդ, 10-րդ և 14-րդ հոդվածների առընչությամբ – Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ.

- Ղազախական Կողմից – Ղազախստանի Հանրապետության ներդրումների և զարգացման նախարարություն,
- 6-րդ, 10-րդ և 14-րդ հոդվածների առընչությամբ - Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հետ համատեղ,

Համաձայնագրի 5-րդ Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 5

1. Բեռների փոխադրումը իրականացվում է ավոտրանսպորտային միջոցներով առանց թույլտվության առկայության՝

- Կողմերի պետությունների միջև,
- Տարանցում երկու Կողմերի պետությունների տարածքներով.

2. Թույլտվություն նաև չի պահանջվում նշանակման վայր տեղափոխվող, դատարկ, առանց տարբերակիչ նշանների, ժամանակավոր (տարանցիկ) գրանցման համարանիշեր ունեցող տրանսպորտային միջոցների համար:
3. Կողմերի իրավասու մարմինների կողմից տրված թույլտվությունների հիման վրա տրանսպորտային միջոցներով իրականացվում են դեպի երրորդ պետություն / երրորդ պետությունից բեռնափոխադրումներ, բացառությամբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադրումների::

Հոդված 11-ը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ:

3. Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում գրանցված և մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ժամանակավորապես տեղակայված ավտոտրանսպորտային միջոցը փոխադարձաբար ազատվում է այդ տարածքում գանձվող ճանապարհային և բնապահպանական ծախսերից, բացառությամբ վճարովի ճանապարհների երթևեկության գանձումներից::

Հոդված 2

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցագիրը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Սույն Արձանագրության գործողությունը դադարում է Համաձայնագրի գործողության դադարեցման օրվանից:

Կատարված է _____ թվականին, _____ քաղաքում երկու բնօրինակով, յուրաքանչյուրը ղազախերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդորում՝ բոլոր տեքստերը հավասապես նույնական են:

Սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման ընթացքում անհամաձայնության դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

Ղազախստանի Հանրաս
կողմից